



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ 1709/02/13թ.
Նախագահող դատավոր՝ Լ.Ավանեսյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ 1709/02/13թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

22-ին ապրիլի 2016թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Գ.Արզումանյանի
Ա.Հայրապետյանի
Գ.Գրիգորյանի

դռնբաց դատական նիստում, քննության առնելով ըստ հայցի Ստելլա Քաջիկի Խաչատրյանի ընդդեմ Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանի՝ ժառանգությունն ընդունելու, ժառանգական գույքը բաժանելու և առանձնացնելու, և ըստ հակընդդեմ հայցի Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանի ընդդեմ Ստելլա Քաջիկի Խաչատրյանի՝ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի հունվարի 21-ի որոշման դեմ հայցվոր Ս.Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Չ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

2013թ. սեպտեմբերի 20-ին Ստելլա Քաջիկի Խաչատրյանը հայցադիմում է ներկայացրել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանի՝ ժառանգությունն ընդունելու, ժառանգական գույքը բաժանելու և առանձնացնելու պահանջների մասին:

2014թ. փետրվարի 7-ին Էրիկ Գրիգորյանը հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել, խնդրելով իրեն ճանաչել Ա.Սարգսյանի մահից հետո ըստ օրենքի բացված ժառանգությունն ընդունած ժառանգ՝ Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/35 հասցեով բնակարանի 1/2 բաժնեմասի, Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/7

հասցեով առևտրի սրահի 1/2 բաժնեմասի, <<Ալեքս>> ՍՊԸ-ի 100% բաժնեմասերի և 4 ավտոմեքենաների նկատմամբ:

Դատարանը 2014թ. հոկտեմբերի 20-ի վճռով Ս. Խաչատրյանի հայցապահանջը բավարարել է մասնակիորեն, իսկ Է. Գրիգորյանի հակընդդեմ հայցապահանջը՝ լրիվությամբ:

Նշված վճռի դեմ 2014թ. նոյեմբերի 20-ին վերաքննիչ բողոք է ներկայացրել հակընդդեմ հայցվոր Է. Գրիգորյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 2015թ. հունվարի 12-ի որոշմամբ բողոքը բավարարել է մասնակիորեն, Դատարանի 2014թ. հոկտեմբերի 20-ի վճիռը բեկանել և գործն ուղարկել է նույն դատարան՝ նոր քննության:

2015թ. մարտի 31-ի վճռով Դատարանը հայցը և հակընդդեմ հայցը բավարարել է մասնակի:

Նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք են ներկայացրել պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Է. Գրիգորյանն ու նրա ներկայացուցիչ Ա. Ապրեսյանը:

2015թ. հունիսի 17-ի որոշմամբ Վերաքննիչ դատարանը բողոքը բավարարել է մասնակիորեն:

Վերաքննիչ դատարանի որոշման դեմ վճռաբեկ բողոք են ներկայացրել պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Է. Գրիգորյանն ու նրա ներկայացուցիչ Ա. Ապրեսյանը և հայցվոր Ս. Խաչատրյանը:

Գերագույն դատարանը 2015թ. օգոստոսի 18-ի որոշմամբ բողոքը մասնակիորեն բավարարել է, գործն ուղարկել Դատարան՝ նոր քննության:

Դատարանը 2015թ. հոկտեմբերի 20-ի վճռով հայցը և հակընդդեմ հայցը բավարարել է մասնակի:

2015թ. նոյեմբերի 4-ին պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Է. Գրիգորյանն ու նրա ներկայացուցիչ Ա. Ապրեսյանը վերաքննիչ բողոք են ներկայացրել:

2015թ. նոյեմբերի 20-ին հայցվոր Ս.Խաչատրյանը ևս բողոք է ներկայացրել Վերաքննիչ դատարան:

Վերաքննիչ դատարանը 2016թ. հունվարի 21-ի որոշմամբ բողոքները բավարարել է մասնակիորեն:

2016թ. հունվարի 21-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվոր Ս.Խաչատրյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2.Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջները

Հայցվոր Ստելլա Խաչատրյանը վճռաբեկ բողոքը բերել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքերով:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ, 44-րդ, 47-րդ, 49-րդ, 50-րդ հոդվածների պահանջները, իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1235-րդ, 1242-րդ, 1243-րդ հոդվածների պահանջները, որի արդյունքում կայացված դատական ակտը մասնակի չի բխում արդարադատության բուն էությունից ու խախտում է ժառանգելու, ժառանգված գույքը ձեռք բերելու և դրանից բխող իր այլ իրավունքները:

Բողոքաբերը նշել է, որ հակընդդեմ հայցվորը երբևէ պահանջում չի ներառել գումարային պարտավորությունների վերաբերյալ որևէ փաստարկ, այսինքն՝ ժառանգության զանգվածի մեջ մտնող պարտավորությունների վերաբերյալ

նյութաիրավական պահանջ չի ներկայացրել դատարանին, այլ նման պահանջ ներկայացրել է միայն վերաքննիչ բողոքում:

Գտնում է, որ իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1242-րդ և 1243-րդ հոդվածների պահանջները համադրելով սույն գործի հիմքերի և առարկայի հետ ստացվում է, որ ժառանգատուի պարտավորությունները սույն գործի շրջանակներում քննարկման ենթակա չեն:

Ըստ բողոքաբերի, օրենսդիրը ոչ թե սահմանել է, որ ժառանգությունը բաժանելիս ենթակա է բաժանման նաև պարտավորության գումարը, այլ «օրենքի տրամաբանությունից և էությունից» բխում է, որ ժառանգները ժառանգությունը ընդունելով, պարտավոր են իրենց հասած ժառանգության հաշվին պատասխանատվություն կրել պարտատերերի առջև, ընդ որում՝ նշված հոդվածներով սահմանված կարգով: Քանի որ սույն գործով որևէ պարտատիրոջ կողմից պահանջ չի ներկայացվել, ուստի դատարանը իրավասու չէ որևէ ժառանգի կարգադրել՝ ժառանգատուի այս կամ այն պարտավորությունը հատուցել կամ ժառանգներից որևէ մեկից հոգուտ մյուսի գումար գանձել այդ նպատակով: Այսինքն, «Արցախբանկ» ՓԲԸ-ի և ներդրումային հիմնադրամի հանդեպ առկա պարտավորությունները սույն գործի շրջանակներում քննարկման ենթակա չեն:

Բողոքաբերը գտնում է, որ ստորադաս դատարանը սխալ է մեկնաբանել և կիրառել վերը նշված իրավական նորմերը, հետևաբար, առկա է իրավունքի զարգացման խնդիր:

Միևնույն ժամանակ բողոքաբերը նշել է, որ եթե Գերագույն դատարանը գտնի, որ գործի այդ փուլում կարող է պահանջ ներկայացվել և պարտավորությունները ևս պետք է բաժանվեն ժառանգների միջև, ապա տվյալ դեպքում էլ ստորադաս դատարանը թույլ է տվել նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտումներ:

Ըստ նրա, ստորադաս դատարանը ժառանգական զանգված կազմող գույքը բաժանելիս խախտել է իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1235-րդ հոդվածի 4-րդ կետի կարգավորումները, որով էլ թույլ է տվել նյութական իրավունքի նորմի խախտում և բնակարանի, մեքենաների, առևտրի սրահի և պարտավորությունների մասով կատարել է սխալ բաժանում:

Նշել է, որ Վերաքննիչ դատարանը բողոքարկվող որոշմամբ ամբողջ անշարժ գույքը և պարտավորությունները թողնելով պատասխանող Է.Գրիգորյանին, իրեն զրկել է անշարժ գույքից ու ՍՊԸ-ն /50.000 ՀՀ դրամ բաժնեմասով/ և համարյա արժեք չունեցող 3 մեքենաները իրեն հատկացնելով, դրել է նվազ պայմաններում հավասար հերթի ժառանգի համեմատ:

Գտնում է, որ ստորադաս դատարանները գործում առկա ապացույցները բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ չեն գնահատել, որի արդյունքում սխալ են մեկնաբանվել և խախտվել նյութական իրավունքի նորմերը ու կայացվել է մասնակի սխալ դատական ակտ, որը հակասում է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-123-րդ հոդվածների պահանջներին:

Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանի և Էրիկ Գրիգորյանի հաշվարկներում առկա են էական տարբերություններ և այդ պատճառով նշված գումարին հասանելիք անհամաչափ բաժնի դիմաց փոխհատուցում չստանալով, ինքը կրել է վնաս: Բողոքաբերը դա համարում է անհամաչափ մոտեցման և սխալ հաշվարկի արդյունք, որն ապացույցները պատշաճ և օբյեկտիվ չգնահատելու, հետևաբար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի պահանջների առերևույթ խախտման արդյունք է:

Վճռաբեկ բողոք բերող անձը նշել է, որ ստորադաս դատարանները պատշաճ չեն գնահատել իր հայտարարությունն այն մասին, որ ներդրումային հիմնադրամի հետ կնքված թիվ 01/383 և 01/384 պայմանագրերով ստացված գումարները Ա.Սարգսյանի հիվանդության համար չեն վերցվել, այլ այդ գումարները մնացել են Է.Գրիգորյանի մոտ, իսկ «բուժման նպատակով» բառակապակցությունը չի կարող իր սխալ /բացասական/ ազդեցությունը թողնել գույքային պարտավորությունների հարցի ազնիվ լուծման վրա, քանի որ միայն «Արցախբանկ» ՓԲԸ-ից ստացված վարկային միջոցներն են ուղղվել Ա.Սարգսյանի բուժմանը, չնայած այդ պայմանագրում այլ նպատակ է նշված: Համարում է, որ նման հանգամանքներում հիմնադրամի պարտքը ներառելը ժառանգության զանգվածի մեջ և բաժանելը՝ իրավացի և արդարացի չէ:

Բողոքաբերը նշել է, որ ստորադաս դատարանը բնակարանի մասով հետևության հանգելիս նույնպես սխալ է թույլ տվել, սակայն բնակարանի մասով պահանջ չի ներկայացնում, քանի որ իրենց համատեղ բնակվելը անհնարին է, սակայն գտնում է, որ արդարացի կլինի այն, որ առևտրի սրահի աջ կամ ձախ մասից՝ ըստ փորձագետի եզրակացության, հատկացվի իրեն, որպեսզի ունենա իր մակերեսը՝ ՄՊԸ-ն աշխատեցնելու համար:

Ըստ բողոքաբերի, նշված սխալ հաշվարկների և անհավասար բաժանումի պատճառով խախտվել է ԼՂՀ Սահմանադրության 33-րդ հոդվածով ամրագրված իր ժառանգելու իրավունքը, և նյութական ու դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում ինքը զրկվել է հասանելիք ժառանգությունից:

Բողոքաբեր Ստելլա Խաչատրյանը գտնում է, որ թույլ տրված դատական սխալը ազդել է գործի ելքի վրա և նպաստել Սահմանադրությամբ ամրագրված ժառանգելու իրավունքից զրկվելուն, քանի որ ժառանգության ակնհայտ անհամաչափ բաժանումը առարկայագուրկ է դարձրել իր կողմից մոր ժառանգության 1/2 մասն ընդունելու փաստը, իսկ Է.Գրիգորյանը դառնում է բնակարանի և առևտրի սրահի սեփականատեր:

Բողոք բերող անձը գտնում է, որ ընդունվելիք դատական ակտով կապահովվի օրենքի միատեսակ կիրառությունը: Խնդրել է բողոքարկված մասով Վերաքննիչ դատարանի 2016 թվականի հունվարի 21-ի որոշումը բեկանել և փափոխել, կամ բեկանել և գործն ուղարկել նոր քննության:

3.Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Անգին Արտաշեսի Սարսգսյանը մահացել է 2013թ. մարտի 8-ին /հ.1, գ.թ.13/:

2.Ստելլա Քաջիկի Խաչատրյանը, ծնված 28.08.1967թ., հայցադիմում է ներկայացրել Դատարան 2013թ. սեպտեմբերի 20-ին, խնդրելով իր և Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանի միջև բաժանել և առանձնացնել ժառանգական զանգվածը, որը պատկանում էր իրենց մորը՝ Անգին Արտաշեսի Սարսգսյանին /հ.1 գ.թ.3-7/:

3. Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանը, ծնված 25.09.1974թ., հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել 2014թ.փետրվարի 7-ին, խնդրելով իրեն ճանաչել Ա.Սարգսյանի մահից հետո ըստ օրենքի բացված ժառանգությունն ընդունած ժառանգ՝ Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/35 հասցեով բնակարանի 1/2 բաժնեմասի, Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/7 հասցեով առևտրի սրահի 1/2 բաժնեմասի, «Ալեքս» ՄՊԸ-ի 100% բաժնեմասերի և 4 ավտոմեքենաների նկատմամբ /հ.1, գ.թ.172-174/:

4.Է.Գրիգորյանը 2013թ. նոյեմբերի 29-ին հայցադիմում է ներկայացրել Դատարան, խնդրելով Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/7 հասցեով առևտրի սրահի 1/2 մասի նկատմամբ իրեն ժառանգությունն ընդունած ժառանգ

ճանաչել, 18.09.2001թ. Ա.Սարգսյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը և 28.01.2002թ. կատարած գրանցումը $\frac{1}{2}$ մասով անվավեր ճանաչել: Դատարանի 2014թ. փետրվարի 21-ի վճռով Է.Գրիգորյանը ճանաչվել է նշված առևտրի սրահի $\frac{1}{4}$ մասի նկատմամբ ժառանգություն ընդունած ժառանգ և $\frac{1}{4}$ մասով անվավեր են ճանաչվել նշված ժառանգության իրավունքի վկայագիրը և կատարած գրանցումը /հ.2, էջ 94-96/:

5. Դատարանի 2014թ. մայիսի 27-ի վճռով Ա.Սարգսյանի անվամբ գրանցված մեկ ավտոմեքենա՝ ԳԱԶ 31-02 մակնիշի 33LS468 պետհամարանիշի, ճանաչվել է Գագիկ Կարապետյանի սեփականությունը և հանվել արգելանքից /հ.2, էջ 91-93/:

6. Փորձագետի 15.03.2014թ. Հմ՝ 0831316/14 եզրակացության համաձայն՝ <<ՎԱԶ-2106>> մակնիշի 21ՍԼ355 պետհամարանիշի ավտոմեքենայի շուկայական արժեքը կազմում է 600.000 /վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ, <<ՎԱԶ-2107>> մակնիշի 23ԼԼ035 պետհամարանիշի ավտոմեքենայի շուկայական արժեքը կազմում է 700.000 /յոթ հարյուր հազար/ ՀՀ դրամ, <<ԳԱԶ 3110>> մակնիշի 23ԼԼ036 պետհամարանիշի ավտոմեքենայի շուկայական արժեքը կազմում է 800.000 /ութե հարյուր հազար/ ՀՀ դրամ:

-Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա շենքի 35 բնակարանի շուկայական արժեքը կազմում է 17.180.000/տասնյոթ միլիոն հարյուր ութսուն հազար/ ՀՀ դրամ, իսկ նույն շենքին կցակառուցված Ալ.Հեքիմյան փողոցի թիվ 6ա/7 հասցեով առևտրի սրահի շուկայական արժեքը կազմում է 11.560.000 /տասնմեկ միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

-Երկու հատ բազկաթոռների շուկայական արժեքը կազմում է 20.000 ՀՀ դրամ, մեկ հատ բազմոցի շուկայական արժեքը կազմում է 20.000 ՀՀ դրամ, հեռուստացույցի տակդիրի շուկայական արժեքը կազմում է 20.000 ՀՀ դրամ, մեկ հատ մահճակալի շուկայական արժեքը կազմում է 10.000 ՀՀ դրամ /հ.2, էջ 1-22/:

7. Փորձագետի 23.06.2014թ. Հմ՝ 16415/14 եզրակացության համաձայն՝ <<Ալեքս>> ՄՊ ընկերության շուկայական արժեքը կազմում է 3.957.886 /երեք միլիոն ինը հարյուր հիսունյոթ հազար հարյուր ութսունվեց/ ՀՀ դրամ /հ.2, էջ 69-75/:

8. Փորձագետի 21.09.2014թ. Հմ՝ 28713/14 եզրակացության համաձայն՝
-Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի թիվ 6ա շենքի 35 բնակարանի $\frac{1}{4}$ և $\frac{3}{4}$ բաժնեմասերը առանձնացնել հնարավոր չէ:

-Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի թիվ 6ա/7 հասցեում գտնվող առևտրի սրահի ընդհանուր մակերեսը կազմում է 28,98 /14,49+14,49/ քառ. մետր, <<այն ունի երկու առանձին մուտքերով տարածքներ, որտեղ կատարվում են երկու տարբեր բնույթի սպասարկումներ>>: Առևտրի սրահից $\frac{3}{8}$ և $\frac{5}{8}$ ենթադրյալ բաժնեմասերը փորձաքննությամբ առանձնացվել են առավել նպատակահարմար երկու տարբերակներով՝ եզրակացության կից հավելվածին համապատասխան /հ.2, էջ 124-131/:

9.<<Արցախբանկ>> ՓԲԸ-ի 11.06.2015թ. տեղեկանքի համաձայն՝ 10.09.2012թ. կնքած վարկային պայմանագրով Անգին Սարգսյանին տրամադրված 5.500.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկի գծով պարտավորությունները 08.03.2013թ. դրությամբ կազմել են 4.943.575 /չորս միլիոն ինը հարյուր քառասուններեք հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ, այդ թվում՝ վարկի մայր գումար՝ 4.921.730,60 ՀՀ դրամ, սոկոսագումար՝ 21.844,40 ՀՀ դրամ /հ.3, գ.թ.84/:

10.Արցախի ներդրումային հիմնադրամի 08.04.2013թ. տեղեկանքի համաձայն՝ <<Ալեքս>> ՄՊԸ և Անգին Արտաշեսի Սարգսյանը չեն հանդիսանում Արցախի ներդրումային հիմնադրամի վարկառու-հաճախորդ /հ1, էջ 80/:

11. Արցախի ներդրումային հիմնադրամը և Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանը 16.10.2012թ. կնքել են N01/383 նպատակային փոխառության պայմանագիր, որով վերջինիս է հանձնվել 6.130 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, տարեկան 14% տոկոսադրույքով, մինչև 27.12.2012թ. վերադարձման պայմանով: Պայմանագրի 1.2 կետում նշված է, որ գումարը տրամադրվում է փոխառու՝ Է.Գրիգորյանի մոր՝ Անգին Արտաշեսի Սարգսյանի բուժման նպատակով /հ.1, էջ 120-123/:

12. Արցախի ներդրումային հիմնադրամը և Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանը 22.10.2012թ. կնքել են N01/384 նպատակային փոխառության պայմանագիր, որով վերջինիս է հանձնվել 4.930 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, տարեկան 14% տոկոսադրույքով, մինչև 27.12.2012թ. վերադարձման պայմանով: Պայմանագրի 1.2 կետում նշված է, որ գումարը տրամադրվում է փոխառու՝ Է.Գրիգորյանի մոր՝ Անգին Արտաշեսի Սարգսյանի բուժման նպատակով /հ.1, էջ 115-118/:

13. Գերագույն դատարանի 2015թ. օգոստոսի 18-ի որոշման մեջ նշված են, որ Ս.Խաչատրյանը և Է.Գրիգորյանը ճանաչվել են ժառանգատուի թողած ժառանգական զանգվածի հավասար՝ 1/2 բաժիններով ժառանգներ և Դատարանի 2015թ. մարտի 31-ի վճիռը այդ մասով չի բողոքարկվել ու մտել է օրինական ուժի մեջ /հ.3, էջ 115-126/:

14. Դատարանը 2015թ. հոկտեմբերի 20-ի վճռով հաստատված է համարել, որ Անգին Սարգսյանի ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքային իրավունքը հետևյալն է. <<ՎԱԶ-2106>> մակնիշի 21ՍԼ355 պետհամարանիշի, <<ԳԱԶ 3110>> մակնիշի 23ԼԼ036 պետհամարանիշի, <<ՎԱԶ-2107>> մակնիշի 23ԼԼ035 պետհամարանիշի ավտոմեքենաները, երկու հատ մահճակալը, հեռուստացույցի տակդիրը, բազմոցի և բազկաթոռների 3/4 մասը, <<ԱԼԵՔՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած 100 տոկոս բաժնեմասի արժեքի նկատմամբ իրավունքը, Ստեփանակերտ քաղաքի Ալ.Շեքիմյան փողոցի 6ա/35 հասցեով բնակարանի 1/2 մասը, Ստեփանակերտ քաղաքի Ալ.Շեքիմյան փողոցի 6ա/7 հասցեով առևտրի սրահի 3/4 մասը /հ.3, էջ 180-186/: Նշված մասով վճիռը չի բողոքարկվել:

Նույն վճռում նշված է, որ ժառանգության զանգվածի մեջ է մտնում նաև <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի նկատմամբ Անգին Սարգսյանի պարտավորությունները և Արցախի ներդրումային հիմնադրամի նկատմամբ N01/383 և N01/384 նպատակային փոխառության պայմանագրերով Էրիկ Գրիգորյանի պարտավորությունները:

15. Վերաքննիչ դատարանի որոշմամբ Ստելլա Խաչատրյանին է հատկացվել <<ՎԱԶ-2106>> մակնիշի 21ՍԼ355 պետհամարանիշի, <<ԳԱԶ 3110>> մակնիշի 23ԼԼ036 պետհամարանիշի, <<ՎԱԶ-2107>> մակնիշի 23ԼԼ035 պետհամարանիշի ավտոմեքենաները և <<ԱԼԵՔՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած 100 տոկոս բաժնեմասի արժեքի նկատմամբ իրավունքը: Էրիկ Գրիգորյանին է հատկացվել Ստեփանակերտ քաղաքի Ալ.Շեքիմյան փողոցի 6ա/35 հասցեում գտնվող բնակարանի 1/2 մասը, Ստեփանակերտ քաղաքի Ալ.Շեքիմյան փողոցի 6ա/7 հասցեում գտնվող առևտրի սրահի 3/4 մասը, երկու հատ մահճակալը, հեռուստացույցի տակդիրը, բազմոցի և բազկաթոռների 3/4 մասը:

Նույն որոշմամբ Էրիկ Գրիգորյանին պարտավորեցվել է մարել ժառանգատու Անգին Սարգսյանի՝ <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի նկատմամբ պարտավորությունները, Է.Գրիգորյանի անվամբ Արցախի ներդրումային հիմնադրամի նկատմամբ առկա պարտավորությունները, ինչպես նաև որոշվել է Է.Գրիգորյանից հօգուտ Ս.Խաչատրյանի բռնագանձել 445.422,25 ՀՀ դրամ՝ որպես անհամաչափ բաժնի դիմաց փախհատուցում /հ.4, էջ 56-71/:

16.<<Նադեժդա>> ՄՊԸ-ի տեղեկանքի համաձայն՝ 2013թ. մարտի 11-ին կատարվել է Անգին Սարգսյանի թաղման արարողությունը, ծախսը կազմել է 600.000 ՀՀ դրամ և գումարը լրիվությամբ վճարել է Էրիկ Գրիգորյանը /հ.3, էջ 85/:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճռաբեկ վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում է, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն կունենան նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ.

1) ժառանգության զանգվածի մեջ մտնող պարտականությունների, ժառանգության հաշվին հատուցվող ծախսերի և ժառանգությունն ընդունած ժառանգին պահանջ ներկայացնելու կարգի վերաբերյալ հարցերին.

2) ժառանգության զանգվածի մեջ մտնող և երկու կամ մի քանի ժառանգների ընդհանուր բաժնային սեփականությանն անցած գույքից ժառանգների համաձայնության բացակայության դեպքում բաժինն առանձնացնելու խնդրին:

1) Անդրադառնալով վճռաբեկ բողոքում բարձրացված ժառանգության զանգվածի մեջ մտնող պարտականություններին և ժառանգության հաշվին հատուցվող ծախսերին, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Անգին Արտաշեսի Սարգսյանի ժառանգության բացման ժամանակ գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ /ներկայումս գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1195-րդ/ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգության զանգվածի մեջ է մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող գույքը՝ ներառյալ դրամը, արժեթղթերը, գույքային իրավունքները և պարտականությունները:

Իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1187-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգությունը բացվում է քաղաքացու մահից հետո:

Նույն օրենսգրքի 1188-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ժառանգության բացման ժամանակը քաղաքացու մահվան օրն է, իսկ նրան մահացած ճանաչելու դեպքում այդ մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը, եթե այլ օր սահմանված չէ վճռում:

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ ժառանգության զանգվածի մեջ են մտնում ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող պարտականությունները:

Սույն գործի փաստերից հետևում է, որ 08.03.2013թ.՝ ժառանգության բացման օրվա դրությամբ, ժառանգատու Անգին Սարգսյանի պարտավորությունները <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի նկատմամբ կազմել է 4.943.575 /չորս միլիոն ինը հարյուր քառասուններեք հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ, այդ թվում՝ վարկի մայր գումարը՝ 4.921.730,60 ՀՀ դրամ, տոկոսագումարը՝ 21.844,40 ՀՀ դրամ:

Ստորադաս դատարանի դատական ակտով ժառանգության զանգվածի մեջ մտնող պարտավորություններ են համարվել <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի նկատմամբ Անգին Սարգսյանի պարտավորությունները՝ 7.374.908,5 ՀՀ դրամի չափով, Արցախի ներդրումային հիմնադրամի նկատմամբ N01/383 և N01/384 նպատակային փոխառության պայմանագրերով Էրիկ Գրիգորյանի պարտավորությունները՝

6.914.247 ՀՀ դրամի չափով /14.256,18 ԱՄՆ դոլարին համարժեք/, ինչպես նաև 600.000 ՀՀ դրամի չափով հուղարկավորության ծախսերը:

Գերագույն դատարանը գտնում է, որ ժառանգատու Անգին Սարգսյանի պարտականությունները կազմված են «Արցախբանկ» ՓԲԸ-ի նկատմամբ 08.03.2013թ. դրությամբ 4.943.575 /չորս միլիոն ինը հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամից, քանի որ սույն քաղաքացիական գործի փաստերով ապացուցված է, որ ժառանգության բացման օրը ժառանգատուին պատկանող պարտականությունները կազմված են եղել հենց վերը նշված գումարից: Բացի այդ, «Արցախբանկ» ՓԲԸ-ից 10.09.2012թ. կնքած վարկային պայմանագրով Անգին Սարգսյանի կողմից վարկ ստանալը և գումարը բուժման նպատակով ծախսելը կողմերը չեն վիճարկել:

Միննույն ժամանակ, Գերագույն դատարանը գտնում է, որ Էրիկ Գրիգորյանի պարտավորությունները Արցախի ներդրումային հիմնադրամի նկատմամբ չեն մտնում ժառանգության զանգվածի մեջ և չեն համարվում մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած ծախսեր՝ ելնելով հետևյալից.

Արցախի ներդրումային հիմնադրամի 08.04.2013թ. տեղեկանքի համաձայն՝ «Ալեքս» ՍՊԸ և Անգին Արտաշեսի Սարգսյանը չեն հանդիսանում Արցախի ներդրումային հիմնադրամի վարկառու-հաճախորդ: Արցախի ներդրումային հիմնադրամի և Էրիկ Գրիգորյանի միջև 16.10.2012թ. կնքվել են N01/383 և N01/384 նպատակային փոխառության պայմանագրեր, որոնցով վերջինիս է հանձնվել 6.130 և 4.930 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ: Նշված պայմանագրերի 1.2 կետում նշված է, որ գումարը տրամադրվում է փոխառու Է.Գրիգորյանի մոր՝ Անգին Սարգսյանի բուժման նպատակով: Սույն գործում առկա ապացույցներից հետևում է, որ Է.Գրիգորյանն Արցախի ներդրումային հիմնադրամի հետ կնքած պայմանագրերի հիման վրա ստացել է նշված գումարները, սակայն գործում առկա չեն ապացույցներ այն մասին, թե ինչ նպատակների համար են ծախսվել այդ գումարները և հիմնավորված չէ, որ մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած ծախսերը մարվել են նշված գումարներով:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ պատասխանող/հակընդդեմ հայցվոր Է.Գրիգորյանը, դատարանին ներկայացնելով Արցախի ներդրումային հիմնադրամի հետ կնքված վերը նշված պայմանագրերը և դրանց հետ կապված այլ տեղեկություններ, պնդել է, որ պայմանագրերում նշված գումարները ծախսվել են իր մոր՝ Անգին Սարգսյանի բուժման նպատակով: Մինչդեռ, հայցվոր Ս.Խաչատրյանը հերքել է նշված գումարները Անգին Սարգսյանի բուժման նպատակով ծախսված լինելու փաստը և պնդել, որ նշված գումարները մնացել են Է.Գրիգորյանի մոտ:

Հաշվի առնելով, որ պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Է.Գրիգորյանը չի ապացուցել, որ նշված գումարները ծախսվել են իր մոր՝ Անգին Սարգսյանի բուժման նպատակով, իսկ հայցվոր կողմը չի ընդունել և հերքել է այդ պնդումները, ուստի վիճելի է մնացել Է.Գրիգորյանի վկայակոչած վերը նշված փաստը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ **գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:** Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք, օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, բացառությամբ նույն օրենսգրքի 48-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Վերոգրյալ դատավարական նորմերից հետևում է, որ դատարանը, ելնելով գործի առանձնահատկություններից, ինչպես նաև գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից, առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը, դրանց շրջանակը: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի շրջանակը որոշելն անմիջական կախվածության մեջ է գտնվում գործին մասնակցող անձանց վկայակոչած փաստերի վերաբերյալ մյուս կողմի ներկայացրած առարկություններից: Հետևաբար, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը **վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը**: Դատարանի կողմից վերը նշված դատավարական նորմերով իրականացվող գործողությունները պետք է ուղղված լինեն ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության համար համապատասխան պայմանների ապահովմանը, գործի համար նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշմանը և գործը լուծելու համար ճիշտ իրավանորմերի կիրառմանը:

Նման պայմաններում պատասխանող/հակընդդեմ հայցվոր Է.Գրիգորյանի պարտավորությունները՝ Արցախի ներդրումային հիմնադրամի նկատմամբ, չեն կարող համարվել մինչև ժառանգատուի մահը նրա հիվանդության հետևանքով առաջացած ծախսեր և չեն կարող ընդգրկվել ժառանգատու Անգին Սարգսյանի պարտականությունների մեջ:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ Արցախի ներդրումային հիմնադրամի նկատմամբ N01/383 և N01/384 նպատակային փոխառության պայմանագրերով Էրիկ Գրիգորյանի պարտավորությունները ժառանգության զանգվածի մեջ ներառելիս, իչպես նաև <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի նկատմամբ ժառանգատու Անգին Սարգսյանի պարտականությունների չափը որոշելիս, Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ, 47-րդ, 49-րդ հոդվածների պահանջների և իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1186-րդ, 1188-րդ հոդվածների պահանջների խախտումներ: Ուստի, նշված մասով վճռաբեկ բողոքի պնդումները՝ դատավարական և նյութական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ, հիմնավոր են:

Ինչ վերաբերում է 600.000 ՀՀ դրամի չափով ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսեր կատարելուն և դրանք պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Է.Գրիգորյանի կողմից կատարած լինելուն, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանի որոշումը նշված մասով չի բողոքարկվել և նշված փաստը հաստատվում է նաև <<Նադեժդա>> ՍՊԸ-ի տեղեկանքով:

Անդրադառնալով ժառանգությունն ընդունած ժառանգին պահանջ ներկայացնելու կարգին, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1243-րդ /գործող 1252-րդ/ հոդվածի համաձայն՝

1. Պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները:

2. Պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին:

Իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1244-րդ հոդվածի համաձայն՝

1. Ժառանգները, ժառանգության իրավունքի վկայագիրը ստանալուց հետո, իրենց անցած գույքի արժեքի սահմաններում հատուցում են նույն օրենսգրքի 1242-րդ հոդվածում նշված ծախսերը:

2. Ինչպես անմիջապես ժառանգության բացման, այնպես էլ ժառանգության ընդունման իրավունքի փոխանցման արդյունքում ժառանգություն ստացած ժառանգը պատասխանատվություն է կրում այդ երկու հիմքերով ստացված գույքի արժեքի սահմաններում:

3. Իրենց անցած ժառանգության արժեքի սահմաններում ժառանգները կրում են համապարտ պատասխանատվություն:

Վերը նշված նորմերից դիտվում է, որ պարտատերն իրավունք ունի իր պահանջը ներկայացնել ժառանգությունն ընդունած ժառանգներին, կտակակատարին կամ ժառանգության բացման վայրի նոտարին: Մինչդեռ օրենսդիրը չի կարգավորել այդ պահանջների ներկայացման կարգը, հետևաբար յուրաքանչյուր դեպքում պարտատերն իր իրավունքը պետք է իրացնի իր կողմից նախընտրած եղանակով, հնարավորություն ունենալով ապացուցելու վերը թվարկված սուբյեկտներին ժառանգատուի պարտավորությունների վերաբերյալ տեղեկացնելու փաստը:

Գերագույն դատարանը գտնում է, որ նման պահանջ կարող է ներկայացվել ժառանգման իրավունք ունեցող այն անձանց, որոնց վարքագիծը վկայում է ժառանգության հնարավոր ընդունման փաստի մասին: Ընդ որում, նման պահանջը կարող է ինչպես անմիջականորեն հասցեագրվել ժառանգին, այնպես էլ վերջինիս ներկայացվել դատարան հայց ներկայացնելու միջոցով:

Վերաքննիչ դատարանն իր որոշման մեջ նշել է, որ գործով միանշանակ ապացուցված է, որ ժառանգատու Ա.Սարգսյանի <<Արցախբանկ>> ՓԲԸ-ին ունեցած պարտավորությունները և հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը կատարվել են պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Է.Գրիգորյանի կողմից, ով միաժամանակ պատրաստակամություն է հայտնել շարունակել մարել պարտավորությունների չմարած մասը:

Համաձայնելով նշված եզրահանգմանը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ Է.Գրիգորյանի վարքագիծը վկայում էր ժառանգության հնարավոր ընդունման փաստի մասին և նա ընդունել է նշված պարտականությունները ու շարունակել կատարել վարկային պայմանագրից բխող պահանջները:

Սույն գործի փաստերից հետևում է, որ պարտատեր՝ <<Արցախբանկ>> ՓԲԸ-ն իր պահանջը ներկայացրել է ժառանգությունն ընդունած ժառանգ՝ Է.Գրիգորյանին, որի վարքագիծը վկայում էր ժառանգության հնարավոր ընդունման փաստի մասին: Իսկ պատասխանող/հակընդդեմ հայցվոր/ Է.Գրիգորյանն ընդունել է նշված պարտականությունները և շարունակել կատարել վարկային պայմանագրից բխող

պահանջները: Հետևաբար, նշված պարտականությունները ժառանգատու Անգին Մարգարյանի պարտականությունների մեջ ներառելով, ստորադաս դատարանը նյութական կամ դատավարական իրավունքի խախտում թույլ չի տվել: Ուստի վճռաբեկ բողոքի պնդումներն առ այն, որ պարտատիրոջ կողմից դատական կարգով պահանջ չներկայացնելու պայմաններում դատարանը իրավասու չէր որևէ ժառանգի պարտավորեցնել հատուցել այն, անհիմն են:

Անհիմն է նաև վճռաբեկ բողոքի պնդումն այն մասին, որ հակընդդեմ հայցվորը երբևէ գումարային պարտավորությունների վերաբերյալ պահանջ կամ փաստարկ չի ներկայացրել, այլ այն ներկայացրել է միայն վերաքննիչ բողոքում: Նշված հարցի վերաբերյալ Է.Գրիգորյանը պայմանագրեր և տեղեկանքներ էր ներկայացրել Դատարանին դատաքննության ընթացքում:

2) Անդրադառնալով վճռաբեկ բողոքում բարձրացված ժառանգության զանգվածի մեջ մտնող և երկու կամ մի քանի ժառանգների ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից ժառանգների համաձայնության բացակայության դեպքում բաժինն առանձնացնելու խնդրին, Գերագույն դատարանն արձանագրում է հետևյալը.

Իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1234-րդ հոդվածի համաձայն՝

1. Ըստ կտակի ժառանգության դեպքում, եթե գույքը կտակված է երկու կամ մի քանի ժառանգների՝ առանց նշելու նրանցից յուրաքանչյուրի կողմից ժառանգվող կոնկրետ գույքն ու իրավունքները և, ըստ օրենքի ժառանգության դեպքում, եթե գույքն անցնում է երկու կամ ավելի ժառանգների, ժառանգության բացման օրվանից գույքը վերածվում է ժառանգների ընդհանուր բաժնային սեփականության:

2. Ժառանգվող գույքի ընդհանուր սեփականության նկատմամբ կիրառվում են ընդհանուր բաժնային սեփականության մասին՝ նույն օրենսգրքի 12 գլխի կանոնները, եթե այլ բան սահմանված չէ ժառանգության մասին նույն օրենսգրքի կանոններով:

3. Ժառանգությունն ընդունած ժառանգներից յուրաքանչյուրն իրավունք ունի պահանջել ժառանգության բաժանում:

Իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1235-րդ հոդվածի համաձայն՝

1. Ժառանգությունը բաժանելու դեպքում ժառանգատուի հետ գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունք ունեցող ժառանգն իրեն հասանելիք ժառանգության բաժնի հաշվին այդ գույքը ստանալու նախապատվության իրավունք ունի:

2. Ժառանգությունը բաժանելու դեպքում ժառանգատուին պատկանող բնակելի տան (բնակարանի) նկատմամբ բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող ժառանգն իրեն հասանելիք ժառանգության բաժնի հաշվին այդ տունը (բնակարանը), ինչպես նաև տնային գործածության իրերը և այլ առարկաները ստանալու նախապատվության իրավունք ունի:

3. Գույքի և ժառանգության նախապատվության իրավունք ունեցող ժառանգին հասանելիք բաժնի անհամաչափությունը վերացվում է մնացած ժառանգներին ժառանգության զանգվածից այլ գույք կամ փոխհատուցում՝ ներառյալ համապատասխան դրամական գումար տալու միջոցով:

4. Ժառանգը կարող է իրականացնել իր նախապատվության իրավունքը միայն մյուս ժառանգներին համապատասխան փոխհատուցում տրամադրելուց հետո, եթե այլ բան սահմանված չէ ժառանգների համաձայնությամբ:

Իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1236-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ ժառանգության զանգվածի մեջ մտնող և երկու կամ մի քանի ժառանգների ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքը կարող է բաժանվել ժառանգների համաձայնությամբ:

Իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1237-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը բաժանելու՝ ներառյալ ժառանգներից մեկի բաժինը դրանից առանձնացնելու վերաբերյալ ժառանգների համաձայնության բացակայության դեպքում ժառանգությունը նույն օրենսգրքի 197-րդ հոդվածին համապատասխան բաժանում է դատարանը:

Իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն օրենսգրքի 197-րդ հոդվածի 3-5-րդ կետերի համաձայն՝

3. Բաժնային սեփականության մասնակիցների միջև ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնության բացակայության դեպքում՝ բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնելու իր բաժինը:

Եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու, առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից կարող է պահանջել վճարելու իր բաժնի արժեքը:

4. Նույն հոդվածի համաձայն, բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաչափությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով:

Բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը կարող են այդ մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում վճարել: Այն դեպքերում, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակիցներին թույլատրել վճարելու փոխհատուցում:

5. Նույն հոդվածին համապատասխան՝ փոխհատուցումն ստանալու պահից սեփականատերը կորցնում է ընդհանուր գույքում բաժնի նկատմամբ իրավունքը:

Վերը նշված դրույթների վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեցող իրավակարգավորումը հնարավոր է համարում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից բաժինն առանձնացնել ինչպես բնեղենով, այնպես էլ դրամական հատուցմամբ: Ընդ որում, **նախապատվությունը տրվում է բաժինը բնեղենով առանձնացնելուն, քանի որ այս դեպքում անձը շարունակում է պահպանել իր սեփականության իրավունքը բնեղենով առանձնացված մասի նկատմամբ**, մինչդեռ փոխհատուցման դեպքում անձի սեփականության իրավունքը բաժնեմասի

նկատմամբ դադարում է: Բաժնային սեփականության մասնակիցն իրավունք ունի դատական կարգով պահանջել ընդհանուր գույքից բնեղենով առանձնացնել իր բաժինը միայն այն դեպքում, երբ բաժնային սեփականության մասնակիցների միջև բացակայում է ընդհանուր գույքը բաժանելու կամ դրանից նրանցից մեկի բաժինն առանձնացնելու եղանակի և պայմանների մասին համաձայնությունը:

Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է հետևանքներ այն դեպքերի համար, երբ կոնկրետ տեսակի գույքը բաժանելու հնարավորությունը սահմանափակված է օրենքով կամ անհնար է առանց այդ գույքին անհամաչափ վնաս պատճառելու: Այդպիսին կարող են համարվել այն դեպքերը, երբ կոնկրետ գույքի կամ գույքի որոշակի տեսակի համար օրենքով, իսկ եթե օրենքում հղում է կատարվում այլ իրավական ակտի, այդ ակտով նախատեսված է բաժանման արգելք, կամ գույքն ունի պատմական նշանակություն կամ մշակութային արժեք և բաժանման դեպքում այն կկորցնի իր նշանակությունը: Յուրաքանչյուր դեպքում կոնկրետ գործի փաստերից ելնելով՝ դատարանները նշված պայմանների հաշվառմամբ պետք է գնահատեն գույքի բաժանման հնարավորությունը: Եվ միայն նշված պայմանների բացակայության դեպքում է առանձնացող սեփականատերը բաժնային սեփականության մյուս մասնակիցներից իրավունք ստանում պահանջելու վճարել իր բաժնի արժեքը: Ընդ որում, այդ արժեքի վճարումը հնարավոր է միայն բաժնային սեփականության մյուս մասնակիցների **համաձայնությամբ, քանի որ այդպիսի համաձայնության բացակայությունը կհանգեցնի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքի խախտման**, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտման:

Վերոգրյալ համաձայնության պարտադիր լինելը հաստատվում է նաև այն հանգամանքով, որ բաժնային սեփականության մասնակցի բաժինը բնեղենով առանձնացնելու փոխարեն մյուս սեփականատերերը նրան փոխհատուցում վճարելու իրավունք ունեն միայն նրա համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ սեփականատիրոջ բաժինն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի:

Ս.Խաչատրյանը և Է.Գրիգորյանը սույն քաղաքացիական գործով ճանաչվել են ժառանգատու Ա.Սարգսյանի թողած ժառանգական զանգվածի հավասար՝ 1/2 բաժիններով ժառանգներ: Անգին Սարգսյանի ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքային իրավունքի ծավալի մասով Դատական ակտը չի բողոքարկվել ու մտել է օրինական ուժի մեջ:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ժառանգությունը բաժանելու կամ ժառանգներից մեկի բաժինն առանձնացնելու վերաբերյալ ժառանգներ Ս.Խաչատրյանը և Է.Գրիգորյանը համաձայնության չեն եկել, հետևաբար, ելնելով վերը նշված իրավական կարգավորումներից, Ա.Սարգսյանի ժառանգությունը պետք է բաժանի դատարանը՝ իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, հաշվի առնելով ժառանգության մասին նույն օրենսգրքի 1234-րդ-1237-րդ հոդվածների կանոնները:

Սույն գործի փաստերից և վերոնշյալից հետևում է, որ ժառանգատու Ա.Սարգսյանի ժառանգության զանգվածի մեջ մտնող և ժառանգներ Ս.Խաչատրյանի և Է.Գրիգորյանի միջև հավասար՝ 1/2 բաժիններով բաժանման ենթակա գույքը հետևյալն է.

-Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/35 հասցեով բնակարանի 1/2 մասը՝ 8.590.000 /17.180.000:2=8.590.000/ ՀՀ դրամ արժողությամբ,

-Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/7 հասցեով առևտրի սրահի 3/4 մասը՝ 8.670.000 /11.560.000x3/4=8.670.000/ ՀՀ դրամ արժողությամբ,

-<<ՎԱԶ-2106>> մակնիշի 21ՍԼ355 պետհամարանիշի ավտոմեքենա՝ 600.000 ՀՀ դրամ արժողությամբ,

-<<ՎԱԶ-2107>> մակնիշի 23ԼԼ035 պետհամարանիշի ավտոմեքենա՝ 700.000 ՀՀ դրամ արժողությամբ,

-<<ԳԱԶ 3110>> մակնիշի 23ԼԼ036 պետհամարանիշի ավտոմեքենա՝ 800.000 ՀՀ դրամ արժողությամբ,

-<<ԱԼԵՔՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ունեցած 100 տոկոս բաժնեմասի արժեքի նկատմամբ իրավունքը,

-Երկու հատ մահճակալը, հեռուստացույցի տակդիրը, բազմոցի և բազկաթոռների 3/4 մասը՝ 70.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ,

-պարտականությունները՝ կազմված <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի նկատմամբ 08.03.2013թ. դրությամբ 4.943.575 /չորս միլիոն ինը հարյուր քառասուններեք հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամից,

-ժառանգատուի պատշաճ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը՝ 600.000 ՀՀ դրամի չափով:

Վերաքննիչ դատարանը 2016թ. հունվարի 21-ի որոշմամբ ժառանգատու Ա.Սարգսյանի գույքային իրավունքներն ու պարտականությունները գնահատել և բաժանել է դրամական արտահայտությամբ, առանց հաշվի առնելու ժառանգների համաձայնության բացակայությունը և բաժինը բնեղենով առանձնացնելու նախապատվությունը, ինչը հանգեցրել է բողոքաբերի կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության սկզբունքի խախտմանը, հետևաբար նաև անձի սեփականության իրավունքի խախտմանը: Դրանով իսկ թույլ են տրվել վերը նշված նյութական իրավունքների նորմերի խախտումներ, որոնք հանգեցրել են գործի սխալ լուծման:

Գերագույն դատարանը հարկ է համարում ընդգծել, որ ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքային իրավունքները բաժանելիս անհրաժեշտ է ղեկավարվել իրավահարաբերությունների պահին գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 197-րդ և 1235-րդ հոդվածի կարգավորումներով, հաշվի առնելով կողմերի հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքները և հիմք ընդունելով տվյալ գործում առկա ապացույցները:

Գործում առկա փորձագիտական եզրակացությունից հետևում է, որ Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի թիվ 6ա շենքի 35 բնակարանի 1/4 և 3/4 բաժնեմասերը առանձնացնել հնարավոր չէ: Նույն եզրակացությունից հետևում է, որ Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի թիվ 6ա/7 առևտրի սրահի ընդհանուր մակերեսը կազմում է 28,98 քառ. մետր, այն փաստացի բաժանված է երկու՝ 14,49-ական քառ. մետր մակերեսով առանձին մուտքերով տարածքների, որտեղ կատարվում են երկու տարբեր բնույթի սպասարկումներ: Առևտրի սրահից 3/8 և 5/8 ենթադրյալ բաժնեմասերը առանձնացնելը հնարավոր է առավել նպատակահարմար երկու տարբերակներով:

Վերոգրյալից ելնելով, Գերագույն դատարանը գտնում է, որ հաշվի առնելով բնակարանի և տնային գործածության իրերի նկատմամբ նախապատվության իրավունքի առկայությունը, Էրիկ Գրիգորյանին պետք է հատկացնել հետևյալ գույքը.

-Ստեփանակերտ քաղաքի Ալ.Շեքիմյան փողոցի 6ա/35 հասցեում գտնվող բնակարանի 1/2 մասը /հասանելիք ¼-ի փոխարեն/, որի շուկայական արժեքը կազմում է 8.590.000 ՀՀ դրամ: Բնակարանի նշված մասում Ստելլա Խաչատրյանին հասանելիք 1/2 բաժնի արժեքը՝ փոխհատուցման ենթակա գումարը, կազմում է 4.295.000 /8.590.000 :2=4.295.000 / ՀՀ դրամ:

-Ստեփանակերտ քաղաքի Ալ.Շեքիմյան փողոցի 6ա/7 հասցեում գտնվող առևտրի սրահի 1/4 մասը, որը Դատարանի 2014թ. փետրվարի 21-ի վճռով Է.Գրիգորյանին պատկանող նույն առևտրի սրահի ¼ մասի հետ մեկտեղ կկազմի ՀՆ՝ 28713 առ 11.09.2014թ. փորձագետի եզրակացության հավելվածում նշված գծագրի ձախ մասում պատկերված 14,49 քառ. մետր մակերեսի ամբողջական մասը: Առևտրի սրահի մյուս ½ մասում Էրիկ Գրիգորյանին հասանելիք 1/8 բաժնի արժեքը՝ փոխհատուցման ենթակա գումարը, կազմում է 1.445.000 ՀՀ դրամ /(5/8-1/2=1/8), (11.560.000x1/8=1.445.000)/:

-Երկու հատ մահճակալը, հեռուստացույցի տակդիրը, բազմոցի և բազկաթոռների 3/4 մասը՝ 70.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ: Նշված կահույքից Ստելլա Խաչատրյանին հասանելիք 1/2 բաժնի արժեքը՝ փոխհատուցման ենթակա գումարը, կազմում է 35.000 /70.000 :2=35.000/ ՀՀ դրամ:

-<<ԳԱԶ 3110>> մակնիշի 23LLO36 պետհամարանիշի ավտոմեքենան՝ 800.000 ՀՀ դրամ արժողությամբ: Երեք ավտոմեքենաների ½ մասում Էրիկ Գրիգորյանին հասանելիք և փոխհատուցման ենթակա գումարը կազմում է 250.000 ՀՀ դրամ /2.100.000:2-800.000=250.000/:

-<<ԱԼԵՔՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 50 /հիսուն/ տոկոս բաժնեմասը:

Գերագույն դատարանը գտնում է, որ Ստելլա Խաչատրյանին պետք է հատկացնել հետևյալ գույքը.

-Ստեփանակերտ քաղաքի Ա.Շեքիմյան փողոցի 6ա/7 հասցեում գտնվող առևտրի սրահի ½ մասը /ՀՆ՝ 28713 առ 11.09.2014թ. փորձագետի եզրակացության հավելվածում նշված գծագրի աջ մասում պատկերված 14,49 քառ. մետր մակերեսով/:

-<<ՎԱԶ-2106>> մակնիշի 21ՍԼ355 պետհամարանիշի ավտոմեքենան՝ 600.000 ՀՀ դրամ արժողությամբ, և <<ՎԱԶ-2107>> մակնիշի 23LLO35 պետհամարանիշի ավտոմեքենան՝ 700.000 ՀՀ դրամ արժողությամբ:

-<<ԱԼԵՔՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 50 /հիսուն/ տոկոս բաժնեմասը:

Հաշվի առնելով, որ <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի նկատմամբ ժառանգության բացման օրվա դրությամբ ժառանգատուի պարտականությունը՝ 4.943.575 ՀՀ դրամի չափով, ընդունել ու շարունակել է կատարել Է.Գրիգորյանը, ուստի Գերագույն դատարանը գտնում է, որ նշված պարտականությունը պետք է թողնել Էրիկ Գրիգորյանի վրա: Նշված պարտականությունում Ստելլա Խաչատրյանի 1/2 բաժինը կազմում է 2.472.000 /4.943.575:2/ ՀՀ դրամ:

Հաշվի առնելով, որ հուղարկավորության համար անհրաժեշտ ծախսերը՝ 600.000 ՀՀ դրամի չափով, կատարվել են Է.Գրիգորյանի կողմից, ուստի Ստելլա Խաչատրյանից հոգուտ Է.Գրիգորյանի ենթակա է բռնագանձման 300.000 /600.000:2/ ՀՀ դրամ:

Արդյունքում, վերահաշվարկելով ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքային իրավունքներում և պարտականություններում առաջացած անհամաչափությունները,

Գերագույն դատարանը գտնում է, որ Ստելլա Խաչատրյանից հոգուտ Էրիկ Գրիգորյանի ենթակա է բռնագանձման 137.000 ՀՀ դրամ / $(1.445.000+250.000+300.000+2.472.000)-(4.295.000+35.000)$ /՝ որպես հասանելիք անհամաչափ բաժնի դիմաց փոփոխություն:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը համարում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու և փոփոխելու համար:

Միաժամանակ Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելու լիազորությունը, քանի որ գործը ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է ԼՂՀ Սահմանադրությամբ ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր, և գործի անհարկի ձգձգումները վտանգ են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Տվյալ դեպքում, Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխելը բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Դատական ակտը փոփոխելիս Գերագույն դատարանը հիմք է ընդունում սույն որոշման պատճառաբանությունները, ինչպես նաև գործի նոր քննության անհրաժեշտության բացակայությունը:

Անդրադառնալով **դատական ծախսերի** բաշխման հարցին, Գերագույն դատարանն արձանագրում է, որ սույն գործով դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և փորձագետի վարձատրությունից: Սույն քաղաքացիական գործով <<ԼՂՀ Դատական փորձաքննությունների լաբորատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպությանը, որպես փորձագետի վարձատրություն ենթակա է վճարման $240.700 / 98.400+11.000+54.700+76.600/$ ՀՀ դրամ: Հաշվի առնելով, որ հայքը և հակընդդեմ հայքը ենթակա են բավարարման մասնակի, ուստի Ստելլա Խաչատրյանից և Էրիկ Գրիգորյանից հոգուտ <<ԼՂՀ Դատական փորձաքննությունների լաբորատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության ենթակա է բռնագանձման 120.350-ական ՀՀ դրամ յուրաքանչյուրից՝ որպես սույն գործով կատարված 4 փորձաքննությունների համար վճարման ենթակա դատական ծախս:

Նկատի ունենալով, որ հայքը և հակընդդեմ հայքը ենթակա են բավարարման մասնակի, իսկ քննվող վճռաբեկ բողոքում ներկայացված պահանջները ենթակա են բավարարման, ուստի մինչև քննվող վճռաբեկ բողոք ներկայացնելը՝ հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար վճարված պետական տուրքերի հարցը պետք է համարել լուծված, իսկ Էրիկ Գրիգորյանից հոգուտ Ստելլա Խաչատրյանի պետք է բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես քննվող վճռաբեկ բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի հունվարի 21-ի որոշումը բեկանել և փոփոխել: Հայքը և հակընդդեմ հայքը բավարարել մասնակի: Անգին Արտաշեսի Սարգսյանի մահից հետո ըստ օրենքի բացված ժառանգությունը հավասար՝ 1/2-ական բաժիններով ընդունած ժառանգների՝ Ստելլա

Քաջիկի Խաչատրյանի և Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանի միջև ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքը բաժանել հետևյալ կերպ.

1.1.Ստեյլա Քաջիկի Խաչատրյանին հատկացնել Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/7 հասցեում գտնվող առևտրի սրահի՝ Հմ՝28713 առ 11.09.2014թ. փորձագետի եզրակացության հավելվածում նշված գծագրի աջ մասում պատկերված 14,49 քառ. մետր մակերեսով մասը, <<ԱԼԵՔՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 50 /հիսուն/ տոկոս բաժնեմասը, <<ՎԱԶ-2106>> մակնիշի 21ՍԼ355 պետհամարանիշի և <<ՎԱԶ-2107>> մակնիշի 23ԼԼ035 պետհամարանիշի ավտոմեքենաները:

1.2.Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանին հատկացնել Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/35 հասցեում գտնվող բնակարանի 1/2 մասը, Ստեփանակերտ քաղաքի Ալ.Հեքիմյան փողոցի 6ա/7 հասցեում գտնվող առևտրի սրահի 1/4 մասը /Հմ՝28713 առ 11.09.2014թ. փորձագետի եզրակացության հավելվածում նշված գծագրի ձախ մասում պատկերված 14,49 քառ. մետր մակերեսի մեջ/, <<ԱԼԵՔՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի 50 /հիսուն/ տոկոս բաժնեմասը, <<ԳԱԶ 3110>> մակնիշի 23ԼԼ036 պետհամարանիշի ավտոմեքենան, երկու հատ մահճակալը, հեռուստացույցի տակդիրը, բազմոցը և բազկաթոռները:

1.3.Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանին պարտավորեցնել մարել ժառանգատու Անգին Արտաշեսի Սարգսյանի՝ <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի նկատմամբ՝ ժառանգության բացման օրվա դրությամբ 4.943.575 /չորս միլիոն ինը հարյուր քառասուններեք հազար հինգ հարյուր յոթանասունհինգ/ ՀՀ դրամ կազմող պարտավորությունները:

1.4.Ստեյլա Քաջիկի Խաչատրյանից հոգուտ Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանի բռնագանձել 137.000 ՀՀ դրամ՝ որպես հասանելիք անհամաչափ բաժնի դիմաց փոխհատուցում:

2.Ստեյլա Քաջիկի Խաչատրյանից և Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանից հոգուտ <<ԼՂՀ Դատական փորձաքննությունների լաբորատորիա>> պետական ոչ առևտրային կազմակերպության բռնագանձել 120.350-ական ՀՀ դրամ յուրաքանչյուրից՝ որպես կատարված փորձաքննությունների համար վճարման ենթակա դատական ծախս:

3.Էրիկ Ալեքսանդրի Գրիգորյանից հոգուտ Ստեյլա Քաջիկի Խաչատրյանի բռնագանձել 20.000 ՀՀ դրամ՝ որպես վճարել բողոքի համար վճարված պետական տուրքի գումար:

4. Հայցի ապահովման միջոցը՝ սույն որոշմամբ բաժանված ժառանգական գույքի մասով, պահպանել՝ մինչև դատական ակտի կատարումը:

5.Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դադարում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝ _____ Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ _____ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

_____ Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ